

Ս Տ Ե Փ Ս Ն Ո Ս Պ Ա Լ Ծ Ս Ը Ց Ը

(1837—1889)

(Մահվան 70-ամյակի առքիվ)



Ստեփանոս Պալասանյանը ժմ դարի հայ հասարակական առաջավոր գործիչներից մեկն է: Հայ նոր մատենագրության և մանկավարժության առաջին մշակների պայծառ խմբի լավագույն ներկայացուցիչներից մեկը՝ մեր ազգային մշակույթի անդաստանի ժիր մշակներ Խաչատրուկի Արովյանի, Ստեփանոս Նազարյանցի, Միքայել Նազարյանի առքիվի հայ մշակույթի:

յանի, Գաբրիել արքեպիսկոպոս Այվազյանի, Վահան վարդապետ Բաստամյանցի, Սմբատ Շահազիզի, Ռաֆֆու և ուրիշների կողքին: Մրանք և իրենց առաջադեմ գործակիցներն էին, որ հերկեցին մեր մանկավարժության խոպան հողը, պատմագիտությունը դրին գիտական հիմքերի վրա, մշակեցին և արդիական ապրող լեզվի բոլոր տվյալներով օժտեցին մեր նոր գրական լեզուն և շանեցին սաղմերը մեր արդի մանկավարժության, հայագիտության, գրականության, մի խոսքով ամրող հայ մշակույթի:

Ստեփանոս Պալասանյանը եղել է մեծ մանկավարժ ու վաստակավոր գաստիարակ: Նա, տարիներ շարունակ, մեր մտավորական գործիչներից շատերի պես, ցուցը ձեռին թափառել է երկրից երկիր և վերջապես հաստատվել Ս. Էջմածնում: Նա իր աստանդական կյանքի պայմաններում իսկ կարողացել է արտադրել մի շարք արժեքավոր աշխատություններ: Բազմակողմանի է եղել նրա գրական գործունեությունը: Նրա բեղմնավոր գրչին են պատկանում մի շարք հրապարակախոսական, քննադատական, լեզվական և պատմաբանական գործեր:

Ստեփանոս Պալասանյանը ծնվել է 1837 թվականին Մոլդավիայում, Ռումինիայի այժմյան Բոտոշան քաղաքում: Այդ քաղաքը ժամանակին եղել է հայաշատ, ունեցել է մի շարք հայկական եկեղեցիներ, որոնցից դեռ կանգուն են Ս. Երրորդություն (ժե դառ) և Ս. Աստվածածին (ժե դար) եկեղեցիները: Այժմ այդ քաղաքում ապրում են մի քանի տասնյակ ոռոմինախոս հայ ընտանիքներ միայն: Եկեղեցիներին կից եղել են հայկական վարժարաններ: «Ժմ դարուն Մոլդավիում մեջ գրեթե ամեն հայ եկեղեցական համայնք ուներ նաև հայկական վարժարան: Հայտնի եղած են այսպես Յաշի Գարագար, Վար-

ժարանը, Ռումանի Սողոմոնյան վարժարանը, Ֆորշանի, Սուլավայի, Բուտոշանի, Տըրկու-Օքնայի, Բուրբեհի և այլ դպրոցները, որոնց շնորհը այսօր ալ տակավին կմնան» (Վազգեն ծայրագույն վարդապետ Պալճյան, «Էջմիածին», 1948 թ., № է—Ը—թ, էջ 67):

Ահա այդ շրջանում, Բուտոշան քաղաքի վարժարանում, իր սկզբնական կրթությունն է ստացել Ստեփանոս Պալասանյանը մինչև 15 տարեկան հասակը 1852 թվականին հոր՝ Հովհաննեսի մահից հետո, պատանի Ստեփանոսը այլևս չի կարողանում շարունակել իր ուսումը: Սակայն ուսման ծարավը բորբոքում է իր հոգին նույն տարին, Բուտոշանի ազգային հոգարարձության միջնորդությամբ, որպես անվճար աշակերտ, ընդունվում է Փարիզի Մուրադյան վարժարանը: Այդ շրջանին Սուլապյան վարժարանի ղեկավարներն էին Սարգիս վարդապետ Թեղորոյանը և Գարրիել վարդապետ Այվազյանը, որոնք որոշ տարակարձություններ ունենին Վենետիկի Մխիթարյան միաբանության հետ: Այդ տարակարձությունների հետևանքով, վերոհիշյալ վարդապետները, իրենց համակիր ուսուցիչների և աշակերտների հետ, թողնում են վարժարանը և հեռանում: Դրանց մեջ էր և Ստեփանոս Պալասանյանը:

1855 թվականին Պալասանյանի ուսման վարձիք համար Գարրիել վարդապետ Այվազյանը իր ընկերների հետ դիմում է Բուտոշանի ազգային հոգարարձության, որպեսզի ազգային գանձարանից 3000 ֆրանկ վճարվի նրա երկու տարվա ուսման և ապրուստի համար: Հետագայում Պալասանյանը վերադարձնում է այս գումարը:

1858 թվականին Պալասանյանը իր ուսումն ավարտելով վերադարձնում է իր ծննդավայր Բուտոշան քաղաքը:

Գարրիել վարդապետ Այվազյանը, Ֆրանսիայից գնալով Ռուսաստան, 1857 թվականին Թեղորոսիայում հիմնում է Խալիպյան վարժարանը: Նորաբաց այս դպրոցի համար ուսյալ մանկավարժներ էին հարկավոր և Գարրիել վարդապետ Այվազյանը իր շուրջն է համախմբում իր նախկին աշակերտներին:

1858 թվականին Պալասանյանը Գարրիել վարդապետ Այվազյանը կողմից հրավիրվում է Խալիպյան վարժարանի ուսուցչության: Այդ օրվանից էլ սկսվում է Պալասանյանի մանկավարժական բազմաթեղում գործունեությունը: Նա այդ վարժարանում ուսուցչությունն անելիս միաժամանակ զրադարձնում է գրականությամբ և աշխատակցում «Մասյաց աղավնի» թերթին:

1861 թվականին Պալասանյանը տեղափոխվում է Նոր-Նախիչևան, որն այդ ժամանակ խոշոր հայաշատ կենտրոն էր: Այդտեղ Պալասանյանը իր երկու ընկերների հետ բացում է մի նոր ազգային վարժարան: 1863 թվականին Պալասանյանը տեղափոխվում է Թիֆլիս, իր հետ տանելով գիտության մեծ պաշտը և աշխատանքային փորձառություն: «Քաջ Հայկարան Այվազյան արքեպիսկոպոսի աշակերտներից մինը լինելով, Պալասանյանը յուր անմոռաց վարժապետից ժառանգել էր մի վառ սեր գեղի ազգային լեզուն, պատմությունն ու գրականությունը, մի գեղեցիկ ոճ ու նուրբ ճաշկանց» («Արձագանք», 1889 թ., № 7, էջ 102):

Թիֆլիս տեղափոխվելով, սկզբում երիտասարդ մանկավարժ վարժապետը մասնավոր գասեր է վերցնում տեղի հայ ընտանիքներում: Սակայն իր համեստության, գիտության և նվիրված աշխատանքի շնորհիվ շատ շուտով նա ճանաչելի է դառնում ամբողջ քաղաքին: Նույն թվականին նա հրավիրվում է Ներսիյան ճեմարան և նշանակվում Հայոց լեզվի, ֆրանսերենի, Հայոց պատմության և գրականության ուսուցիչ Այդ օրվանից Պալասանյանի առջև բացվում է գործունեության լայն ասպարեզ: Պալասանյանը, իրքն հոչակավոր հայկարաններու աշակերտ, շուտով հայտնի է դառնում ազգային-համարակական խնդիրներով զրադարձության շրջանակներին:

Հայտնի դերասան Գևորգ Զմշկյանը, որ միաժամանակ զրադարձնությամբ և հասարակական գործունեությամբ, իր «Իմ հիշատակարանը» գրքում գրում է, թե ինչպես մի խումը հասարակական գործիչներ հիմնում են «Մշկ»-ը և աշխատանքը բաժանեցինք մեր մեջ: «Աշխատությունը բաժանեցինք մեր մեջ այսպես՝ առաջնորդող հոգվածները գլխավորապես վերաբերում էին Գրիգոր Արծրունու աշխատության, որ պիտի կոչվեր խմբագրապետ, քաղաքականը՝ իղմայելյանին, ներքին տեսությունը՝ Շահնշահրդանին, ֆեյլատոնը՝ Ամերիկանին, բանասիրականը՝ Պոռշյանին և զատաստանականը՝ ինձ Բացի այդ, մենք միաձայն որոշեցինք հրավիրել Պալասանյանին լեզվի վերահսկելու համար...» (Գ. Զմշկյան, «Իմ հիշատակարանը», էջ 110):

Կարճ ժամանակում Պալասանյանը տիրապետում է արևելահայերենին: Արարատյան լեզվի քաղցրությունը, համն ու հոտը առաջին անգամ Պալասանյանը առնում է Խաչատրու Աբովյանի «Վերը Հայաստանի» անմա՞ս ստեղծագործությունից: Արովյանը առաջինն էր, որ Արարատյան բարբառին

քաղաքացիություն տվեց, այդ լեզվի քաղցրությամբ համակեց բռնորին և Քանաքեռի արարատահայաց բարձունքից հայրենասիրական հրաբորորդ խոսքերով, իր հասկանալի պարզ ու քաշըր ոճով հրգեց մարդկանց սրտերը: Այս այդ մարդկանցից մեկն էր Ստեփանոս Պալասանյանը: Նա ու միայն տիրապետեց արևելահայերենին, այն սկսեց մշակել և կատարելագործել այն, նա «հրատարակեց աշխարհաբար լեզվի մի ռքերականություն», որ առաջին անգամ հրատարակվեցավ պր. Արգար Հովհաննիսյանի ծախքով և մեծ օգուտ տվակ մեր դպրոցներին: Այն ժամանակ Պալասանյանի հայոց գերականությունը գրեթե միակն էր ուստարանակ հայերին մեջ և հայ երիտասարդները միայն դրանով էին ծանոթանում աշխարհաբարի կազմության և ոգուն» («Արձագանք», Թիֆլիս, 1889 թ., № 7, էջ 102): Պալասանյանի աշխատության վերնագիրն է «Ընդհանուր տեսութիւն արևելյան նոր գրաւոր լեզուի հայոց», հրատարակված 1878 թվականին: Այդ աշխատության առաջարանում հեղինակը հայտնում է, որ ինքը օգուրվել է նաև Հ. Արքեն Այստրյանի «Քննական գերականութիւն»-ից և համեստաբար ասում է. «...Մեր միտքը չէ ամենակին քերականություն գրել. այդ հանդինությունը հեռու է մեզանից, միտ դնելով այն դրության, որի մեջ գտնվում է մեր մանուկ լեզուն: Մեր դիտավորությունը եղել է միայն լեզվի գիշավոր ու ամենասովորական ձևերը մեկտեղ հավաքել, գուցե այս փոքրիկ աշխատությունը հորդոր լինի ավելի մանրամասն դիտողություններ գրելու նոցա՝ որոնց քաղցր ու սիրելի է մայրենի լեզվի հառաջադիմությունը»:

Պալասանյանը հրատարակել է նաև «Գործնական գերականութիւն»:

Ստեփանոս Պալասանյանը 18 տարի ներսիսյան դպրոցում ուսուցություն է անում, դասավանդելով հայերեն, ֆրանսերեն, հայոց պատմություն, ընդհանուր ազգաց պատմություն, հայ գրականություն: Միենավում ժամանակ Թիֆլիսի Գայանյան օրիորդաց դպրոցում հինգ տարի ծրի դասավանդում է, 1869—1874 թվականներին, որի «հիմնադիր» անունն էին տալիս նրան: Թիֆլիսում օրիորդաց այդ դպրոցը բացում են Ստեփանոս Պալասանյանը և մի խումբ այլ երիտասարդներ, առաջնորդ Մակար արքիպիսկոպոսի համությամբ, 1869 թվականի հունիսի 17-ին:

Պալասանյանը հարգված էր հայ մտավորականների շրջանում, որպես լուսամիտ, եռանդու, ներողամիտ, աշխատասեր, համեստ: և պարտաճանաւ մի անձնավորու-

թյուն: Երևանի Գրականության և արվեստի թանգարանում Մ. Բարխուդարյանի ֆոնդում պահպան է մի անտիկ բովանդակալից հոդված, որը գրել է մեծանուն բանաստեղծ համար, սակայն մնացել է անտիկ: Հոդվածը մեծ լույս է սփռում Ստեփանոս Պալասանյանի կյանքի ու գործունեության վրա: Հովհաննիսյանը, նկարագրելով Պալասանյանի բնավորությունը, գրում է. «Հանգուցյալ Պալասանյանը մի լուրջ և մտախոն անձնավորություն էր, որ սակայն մինչև յուր կյանքի վերջը պահպանում էր հազվագյուտ հոգու պարզություն, մի տեսակ մանկական միամբություն, ոյուրահավատություն, որ հաճախ նորա պաշտոնակիցներին բազմատեսակ բարեսիրա կատակների տեղիք էր տալիս հանգուցյալի վերաբերությամբ: Այսպես, օրինակ, շատ հեշտ էր Պալասանյանին հավատալ տալ ամենաանակնակալ իրողությանց և նորա հավատալոց հետո բավականին դժվար էր լինում համոզել, որ նորան խարել են: Երբեմն էլ, կարծես թե անցած փորձերից խրատված, չէր կամենում հավատալ այն լուրերին, որ նրա ընկերները հաղորդում էին կատարված իրողությանց վերաբերությամբ: Ահա ձեզ մի այլ հատկություն (բացի նորա համեստությունը), որ նույնպես հազվագյուտ էր մեր մեջը (Գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Մ. Բարխուդարյանի ֆոնդ, № 614):

1881 թվականին Գուրգ Դ կաթողիկոսը, Գևորգյան ճեմարանի դասախոսական կազմը համալրելու համար մտավորական հմուտ մանկավարժներով, Ստեփանոս Պալասանյանին հրավիրում է Մ. Էջմիածին: Պալասանյանը 8 տարի Գևորգյան ճեմարանում դասավանդում է հայոց պատմություն, ֆրանսերեն: 1883 թվականին, ճեմարանի ուսուցչական կազմը և երախտագիտ աշակերտները, ճեմարանի դաշլիճում տոնում են Պալասանյանի մանկավարժական գործունեության 25-ամյա հորելյանը և այդ առթիվ Գամառ-Փաթիպան նրան նվիրում է «Հայ վարժապետա վերնագրով մի բանաստեղծություն: Հինգ տարի հետո, 1888 թվականին, Գևորգյան ճեմարանը այս անգամ տոնում է Պալասանյանի մանկավարժական գործունեության 30-ամյա հորելյանը, Կարճատև հիվանդությունից հետո, Պալասանյանը 1889 թվականի փետրվարի 19-ին, մեր գրի ու գրականության հանճարեղ ստեղծիլ Մերուպ Մաշտոցի վախճանման տարեդարձի օրը, խորհրդագոր զուգադիպությամբ, կնքում է

իր մահկանացում։ Հայ մանկավարժական և գրական աշխարհը կորցնում է իր անխոնչ մշակին։ Մի պայծառ աստղ է թուղում դեպի հավիտենականություն հայ գրականության երկնակամարից, թողնելով նրա վրա իր անաղարտ և ինքնուրույն հետքը։

«Արարատ» ամսագիրը նկարագրում է Պալասանյանի թաղումը։ Մեջ ենք բերում մի փոքրիկ հատված, ցույց տալու համար, թե ինչքան սիրված ու ժողովրդական մարդ էր Պալասանյանը, ինչքան հարգված մանկավարժ։ «Ամսիս 20-ին, ժամը 4 կեսին, հանգուցյալի մարմինը բերվեցավ իր բնակարանից Ս. Գայանեի վանքը՝ հանգուցյալի սպավոր այրիի, դսեեր, բազմաթիվ հոգնորականության, ճեմարանի տեսչի, ուսուցչական խմբի և խուռան բազմության ուղեկցությամբ։ Ճանապարհը, որով բերում էին հանգուցյալի մարմինը, անցնում էր ճեմարանի բակով։ Այդուղի կանգ առավ հանդիսավոր զնացքը և հանգուցյալի նախկին աշակերտ, այժմ ճեմարանի վերակացուել Կ. Տեր-Մկրտչյանը մի քանի սրտարությ խոսքեր ուղղեց գեղի սիրելի վարժապետի դիակը։ Հետեւյալ օրը՝ ամսիս 21-ին, առավույն 11 ժամին հանգուցյալի մարմինը նույնպիսի հանդիսով հանձնվեցավ Հողին Ս. Գայանեի վանքի բակի հյուսիս-արևելյան կողմում։ Դապաղի վրա՝ Տաճարում մի պատշաճավոր ճառ արտասանեց Սինոդի անդամ գերաշնորհ Սարգիս սրբազնը, իսկ գերեզմանի վրա՝ ճեմարանի կողմից՝ պատկառելի ուսուցիչ պր. Ս. Պալյանը։ Սրտաշարժ էր տեսնել ինչպես հանգուցյալի աշակերտություն մի քանիսը իրենց ձեռքով ի պատիվ վարժապետի գրած դամբանական ճառերը թաղեցին նրա գերեզմանում։ Հանգուցյալի վրա դրվեցին մի քանի պսակներ՝ որոնցից աշքի էին ընկնում մանավանդ երկուար հետեւյալ մակագրություններով։ «Ճեմարանը յուր բազմերախտ մշակին՝ Ստեփանոս Պալասանյանին» և «Գեորգյան ճեմարանի ուսանողները իրենց սիրելի վարժապետին» (Ե. Մ., «Արարատ», 1889 թ., էջ 125—128)։

Ստեփանոս Պալասանյանը վախճանվեց մի այնպիսի հասակում, երբ զեռ նա ստեղծագործական վերելքի մեջ էր։ Սակայն, չնայած նրա կյանքը երկարատև չեղավ, բայց եղավ արդյունաշատ ու բեղմնավոր, նա մեծ արդյունք ունեց թե՛ գրականական և թե՛ մանկավարժական այն ժամանակի համար փշալի ասպարեզում։ Մանկավարժական ասպարեզում նա հայտնի էր որպես հմուտ, բարեխիղճ և փորձառու ուսուցիչ, որ «ոչ որպէս արուեստ ուսուցանէր, այլ իրու զհոգի առաքելաբար աշակերտելոցն տայր»։ Իր գրական գործունեությամբ Պալասան-

յանը մեծ ազդեցություն թողեց հայ աշխարհիկ լեզվի զարգացման գործում։

Պալասանյանի սրտին մոտիկ էին բոլոր այն շարժումները, որոնք ուղղված էին իր ժողովրդի բարօրությանը, հոգևոր և նյութական վերելքին։ Հերիք էր, որ համոզվեր որևէ ձեռնարկի նպատակահարժմարության այդ ուղղությամբ, նա այնտեղ էր իր կարելիություններով։ Դրա համար էլ իր ժամանակի հայ կյանքի բոլոր դրական էշերում կա Պալասանյանի անունը։

Որպես հասարակական գործիչ, Պալասանյանը իր նպաստն է բերել Թիֆլիսի հայ թատերական գործին։ Խմբագրում և անձամբ թարգմանում էր պիեսներ նրա թարգմանած պիեսներից մեկն էր Վ. Հյուգոյի «Էռնանի»-ն, որը երկար ժամանակ ներկայացվում էր Թիֆլիսի հայկական թատրոնում։

Պալասանյանը գրել է սկսել զեռ ուսանողական շրջանից, երբ թղթակցում էր «Մասյա աղավնի» հանդեսին։ Թիֆլիս գալով եռանդով աշխատակցում է «Կոռուկա-ի», «Մեղու Հայտատանի»-ին, իսկ «Մշակ»-ի մեջ բանասիրական բարին ուներ։ Սակայն նա իր այդ գրական զործունեության մեծագույն մասը նվիրեց Արգար Հովհաննիսյանի «Փորձ» ամսագրին, որի ամեն մի համարը զարգարաված էր նրա գրչի գեղեցիկ արդյունքներով, «Գրիշ» կեղծանունով կամ անսուրբագիր։ Ոչ մի հոգվածում ընթերցողը չի կարող գտնել գեթ մի տող, որտեղ Պալասանյանը իր մասին խոսած լիներ։ «Նա, զգալով յուր ուժը, համեստ էր Այդպես է լինում ամեն մատենագիր, որի միտքը զարգած, գրիշը բեղմնավոր է և նպատակն ազնիվ։ Պալասանյանը միտ ուներ հայ ընթերցողին տալու հարուստ պաշար, և նա յուր գրիշը գործ էր ածում ժողովրդի միտքը լուսավորելու համար...» («Արձագանք», 1889 թ., № 7, էջ 102)։

Ենք սիսակվի եթե ասենք, որ այն ժամանակ նալբանդյանից հետո ոչ մեկ ազգային հեղինակ արևելահայերենը չհասցրեց ճշմարտության, վայելչության ու սահունության այն աստիճանին, որին հասել էր այն Պալասանյանի գրչի տակ։

Ահա թե ինչ է գրում Հ. Հովհաննիսյանը իր ուսանողության շրջանից Լազարյան ճեմարանում։ «Մենք կարգում էինք «Փորձ»-ը ազահությամբ։ Մեր սիրելիներն էին Պոլշյանց, Գ. Բարիսուդարյանց և Պալասանյան, մանավանդ Պալասանյան։ Առաջինը ոգևորում էր մեզ իրքի հայ վիպասան, իրքն մի երկրորդ Արովյանց, որ այդ ժամանակ իմ կուրքն էր. երկրորդը բորբոքում էր մեր երեակայությունը հայ գրականության եվրո-

պական մի իդեալով, շնորհիվ Շիլերի անվան: Բայց ի՞նչ էր տալիս մեզ Պալաւանյանը, ամեն բան մոռացած՝ մենք նորա մեջ ամենից առաջ լիզու էինք տեսնում, մենք վճռել էինք, որ Պալասանյանի սահման կանոնավոր լեզուն ոչ ոք շոնիչ և ով դիտե, թե երբ պիտի տեսնենք դորանից լավը: Լավ հիշում եմ այս բոլորը. հիշում եմ, որ ընկերներիցս մինը «Փորձ» էր ստանում, Բարիսուղարյանը, «Պալասանյան» և «Գրիշ» ստորագրությանց տակ համարյա միշտ գրում էր Կարմիր թանաքով «բրավո», «կեցցես»: Պալասանյանով հափշտակված մնացինք մենք երկար ժամանակի:

Եթե նա ոչ մեկ ծառայություն մատուցած միներ հայ ժողովրդին, այդ արժանիքը միայն բավական էր, որ նա իր պատվավոր տեղը բռներ հայոց գրականության պատմության մեջ: «Ստեփանոս Պալասանյան, որ նվիրեց իրեն առանձնապես մի շատ կարևոր ճյուղի մշակմանը, այն է՝ հայոց գրականության պատմության: Առաջինը եղավ նույնպես, որ գրաղեց գրականության մատենախոսական (Քննադատական) ճյուղով Նալբանդյանից հետո: Պալասանյանից հետո մինչև այժմ էլ նրանով լրջորեն գրադարձուող չի եղել այնպես, ինչպես գրաղեց են, օրինակ, ուսական թեկնսկի, Դորրոլյուրով, Պիսարև մատենախոսուները, և ինչպես գրաղեց էր նույնպես Պալասանյանը (Վրթանես Փափազյան, «Պատմություն հայոց գրականության», Թիֆլիս, 1910 թ., էջ 547): Բայց մատենախոսականներից Պալասանյանը «Փորձ» ամսագրի մեջ ունի հետեւալ արժեքավոր ուսումնասիրությունները. «Մի հայացք հայոց նախնական կարգի վրա» (1876 թ.), «Գիտություն ու կրոն» (1876 թ.), «Եվրոպայի վաճառականությունը Կիլիկիայի հետ» (1876 թ.), «Ազգերի զարգացման օրենքները» (1877 թ.), «Բնափորությունների ժառանգականությունը» (1879 թ.), «Հայոց մտավոր շարժումը և դարում» (1878 թ.), «Թե ի՞նչ վիճակի մեջ է հայկական գրականության պատմությունը» (1880 թ.) և այլն:

Այդ հոդվածներով նա քննադատության ճաշակ էր տալիս ընթերցող հասարակությանը, որը նորություն էր հայ գրականության մեջ, եթե նկատի շունենանք նալբանդյանի «Կրիտիկա Սոս և Վարդիթերի» աշխատությունը:

Արգար Հովհաննիսյանի «Փորձ»-ը դադարելուց հետո նա իր բովանդակալից հողվածներով հանդիս էր գալիս «Վարժարան» ամսագրերում: Ստեփանոս Պալասանյանը զրադղել է հայ կյանքի բոլոր հարցերով: Նա հայ Ազգի ինքնագիտակցության զարթոնքի ուսմաներից էր ու չերմ հայրենասեր:

Պալասանյանը պատմական օրինակներով ցույց է տուիլս գալթականության վնասակարությունը, և իր խոսքը եղրափակում է հետևալ կերպով. «Ամենալավ օդն այն է, ուր Ազգը ծնվել է... Զէ, պանդիտասեր հայ, բավ է որքան քու հայրերն ու պապերը թափառեցան օտար երկնքի տակ»:

Բացի նախկինում նշված գրքերից, իրեւ հայ գրականության և պատմության դասախոս, պատրաստել և հրատարակել է «Հայոց գրականության պատմություն», Ա. Հատոր (1865 թ.), «Ընթերցարան մանկանց», «Այրենարան հայ-ֆրանս» և այլն:

Սակայն Պալասանյանի գլուխ-գործոցը նրա «Հայոց պատմություն»-ն է, որը վաստակավոր պատմաբան ուսուցչի տասնյակ տարիների բրտնաշան աշխատանքի և փորձի արդյունքն է: Այդ հետմահու հրատարակություն եղավ, սակայն և արժանացավ մեկից ավելի տպագրությունների թիֆլիսում, Կոստանդնուպոլսում և այլուր: Այդ աշխատությունը երկար ժամանակ մեր լավագույն դասագիրքն է եղել և գործածվել է մեր դրացներում, հայության թե՛ արևելյան և թե՛ արևմտյան հատվածներում:

Կիսատ և անտիպ է մնացել Պալասանյանի ուսու-հայերեն բառարանը: Անավարտ է մնացել նաև մի ազգային պատմության դասագիրք ծխական դպրոցների համար:

Պալասանյանը հայ մշակույթի բազմավաստակ մշակներից մեկն է, թաղմած հաւրենի լուսաշղող երկնքի տակ, Ս. Էջմիածնի ծոցում, Ս. Գայանեի վանքի հյուսիս-արեվելյան կողմում: Ճիշտ է ասել մեր ազգային բանաստեղծ Հովհաննես Թումանյանը. «Գերեզմաններ կան, որ պայծառ են, ծպտում են մարդկանց սրտերին, մի խոր, հավիտենական ժպիտով, ու ասես թե կյանքը հաշեցնում են մահի հետ» (Հ. Թումանյան, «Երկերի ժողովածու», Դ հատոր, էջ 296):

ՍԱՆԴՐՈ ՍԱՐԿԱՎԱԳ ԹԵՇԹՈՒԴՅԱՆՑ

